վետարան*, գրված «Սամուել նուաստ քահանայի և յետին գրչի» կողմից «ի թագաւորութեանն Հոռոմոց, որ կոչի Միխայլիս և ի թուականութեանն հայոց ի ՆՂ և ի կաթողիկոսութեանն տն Պետրոսի հայոց կաթողիկոսի և վերադիտողի, յորժամ Յաւանէս հայոց թագաւորն վախճանեցաւ ի քս և ետ զթագաւորութին (s!) իւր որդւոյ եղբաւր իւրոյ որ կոչի Գագիկ», ուրեմն 1041 թ.: Ավետարանը յուր խորաններով և մանրանկարներով շատ մոտ ե ասորական 586 թվի Րաբուլայի ավետարանին. սկզբում յեղած մի շարք անորինականներից Քր. խաչելությունն ե և խաչից իջեցնելը, վոր իրենց պարզությամբ և պատկերագրական նշաններով օրինակներ ունին Զ. դարու ասորա-պաղեստինական արվեստի մեջ:

Խաչեցյալի աջ կողմից կանգնած ե Մարիամ բարեխոսի նույն դիրքով, ինչ վոր մեր քանդակի մեջ*. և սա միակ օրինակը չե. նման յերևույթ ունինք Թեֆլիսի Մուղնու յերկաթագիր, մեծադիր ավետարանի մեջ, վորի խորանները ասորակոպտական արվեստների հետ կապ ունին, իսկ ձեռագիրը ծագումով ուշ չե, քան ԺԲ. դարը: Ավետարանն այժմ պահվում ե Յերևանի թանգարանում և մեկն ե հայ արվեստի նշանավորագույն յերևույթներից: Ավելի քիչ տեղեկություն կարող ենք տալ, խմբանկարի յերրորդ անձի՝ Հովհաննես Կարապետի տիպի մասին,



Ամենակալը Սպիտ. Աստվածածին վանքում. Պատկեր 99.

վորպես բարեխոսի: Հովհաննես Մկրտչի տիպը չպետք ե շփոթել, Հովհաննես բարեխոսի հետ, թեպետ յերկուտեղումն ել շեշտված ե անապատականի հանգամանքը:

Ինչպես ասացինք, արվեստի պատմության մեջ այս խմբանկարը յուր յերեք ֆիգուրներով յերևան ե գալիս միայն Ժ—ԺԱ. դարերից սկսած, ինչպես Հարբավիլի տրիպտիկն և Լուվրում, Լիմբուրգի յեկեղեցական թանգարանի մասունց պահարանը, Կոստանդին (920թ.) և Ռոմանոս (944 թ.) կայսրների կողմից շինել տված. վիրական Խախուլի Աստվածածնի պահարանը, վոր շինել ե տվել Դեմետր արքան (1125—1154 թ.), բայց նրա վրա յեղած պատկերները ավելի հին են: Մեր քանդակին նմանություն են բերում ավելի Հռովմի Sancta Sanctorum-ի մի արծաթե արկղի դեիսուսը, բայց առավել ես Ակվիլեյից ս. Մարկոս փոխադրված բարձրաքանդակը, վոր մերի նման ֆիգուրներն առնված են կիսասյուների վրա կապված կամարների տակ**:

Այս հիշատակությունները ու համեմատությունները ցույց են տալիս, վոր մեր խմբաքանդակը բյուզանդական արվեստի մեջ ընդհանրացած, «խնդրվածքի» վերջնական ձևակերպության մի փոփոխակ ե: Ցե՞րբ ե մտել մեր մեջ, ճշտությամբ վորոշել չենք կարող, բայց ԺԳ. դարում շատ տարածված մի մոտիվ եր այն հայ արվեստի մեջ, բացի վերև հիշված հայ քանդակներից, հաճախ նաև մանրանկարչության մեջ:

* Այս ավետարանը տեսել ենք, նկարագրել և լուսանկարել 1914 թվին մեր գնալի այդ կողմերը կատարած հնագիտական ճանապարհորդության ժամանակ:

** Kraus I. 559. Diehl. 619, 646, 663. Кондаков. Иконогр. Спаса. 35, 37, 38: Նույնի հեղինակի Иконогр. БМ. II. 307.